

տեղի ունենայ: Եւ առհասարակ որքան ստա-
փել լինի վարակումը, այնքան աւելի յաճախ
պէտք է կրկնել այս գործողութիւնը: Նախա-
զգուշանալու համար վատ չի լինի սրտիկ նստե-
լաւարակաւ անգիտի հարեան արտերը: Նախ-
քան սրտիկը անհրաժեշտ է խտանել հեղու-
կը որպէսզի ակնուցք չմնայ:

(Իւ շարունակուի)

Գ. Ղ.



ԵՐԳԻ ՑՅՈՑ ԵՒ ՊԱՐՈՒՑ

ՍՆՆԵՍԵՐԻ ԸՈՒՍՊԵԼԸ ԵՒ ԳՈՒՍԵՆԵՐՆԵՆ

Սուրբ Գրքի աւանդութիւններ հայոց մէջ:—
Ոլոմպիոդորոսի հին անգիր զրոյցների բովան-
դակութեան մասին տեսա՞նք Հայկի առասպե-
լի մէջ: Խորենացին որովհետեւ առանձին նը-
շանակութիւն է տալիս այս զրոյցներին, ուս-
տի մանրամասնօրէն պատմում է թէ ինչպէս
է հասել իրեն անոնց բովանդակութիւնը: Մենք
այդ մասին երկար կանգ առնել չենք
ուզում, զի հայ ժողովրդական առասպելնե-
րին չեն վերաբերում այդ զրոյցները: Սա-
կայն նկատենք, որ չզիտենք ինչ հիման վրայ
պ. Խալաթեանը (եր. 43) գրում է Ոլոմպիո-
դորի զրոյցների մասին. «Հայոց անգիր
հին զրոյցներ, որոնք աւանդուում էին հին
ժամանակներում յունաց իմաստունների մէջ: Խորենացու մէջ այսպիսի բան չկայ. Ոլոմ-
պիոդորոսը իւր պատմածը Բսիսութրէսի
Սեմի եւն մասին պարզապէս առնում է մի
մատենանից, բայց նա այդ անուանում է «զը-
րոյց» անգիրս յաւանդութենէ ի մեզ հա-
սեալ, որովհետեւ ինքը մատենանը չէ տե-

սել, այլ ուրիշներն են իրեն պատմել թէ
մատենանի է թէ անոր բովանդակութեան մա-
մասին: Արդարեւ նա իբրեւ վկայութիւն յա-
րում է. «Զոր է [նաեւ] բազումք ի գեղջկաց
զրուցեն մինչև ցայժմ. բայց ինչ հիմունք
ունինք կարծելու թէ այդ գեղջուկներն
անպատճառ հայ գիւղացիք պիտի հասկա-
ցուին, և ոչ թէ, օրինակի ասորի: Մի՞թէ ա-
սորոց կամ ուրիշների մէջ աւանդութիւն
ներ չեն եղել Նոյի տապանի Հայաստանի լեւ-
ների վրայ նստելու մասին: Եւսերիոսի Բրո-
նիկոնի մէջ, Ալէքսանդրի բազմավիպի վասն
Ջրհեղեղին ի նմին գրոց՝ [Բերոսոսի] գորմէ ա-
սացան, վերնագրի տակ, գտնում ենք Բրի-
սութրէսի պատմութիւնը և վերջում. «Տե-
ղին՝ յորում վայրի ելեալ կային հայոց աշ-
խարհն է... Եւ ի նաւէն՝ ուր (կամ որ) չո-
գաւ դադարեաց ի հայս, և ցայժմ սակա-
ինչ մասն ի կորդուացուց լերինն ի հայոց աշ-
խարհին մնալ նշխար ասեն. և ոմանց քերել
բերել ի ծեփածոյ նաւին նաւթոյ՝ ի բժշկու-
թիւն և ի ջնջոց ցաւոց ինչ բժժանաց: 2 Նոյն
Եւսերիոսի Բրոնիկոնի մէջ «Արիգենայ վասն
Ջրհեղեղին» վերնագրի տակ (եր. 48 հտն.),
Բսիսութրէսի պատմութեան մէջ կարգում
ենք. «Եւ նաւն երթեալ յաշխարհն հայոց դա-
դարէր. և ի փայտից դեղ օգնականութեան
բնակչաց աշխարհին պարգեւէր: Մի՞թէ այս-
քանը միայն բաւական չէ հաւաստիացնելու,
որ յունաց գրքերի մէջ դրուած են եղել Բսի-
սութրէսի Հայաստան ելնելու մասին, թէ
այդ աւանդութիւնները կամ զրոյցներն օտար
ծագում ունին 3 և թէ Ոլոմպիոդորոսի յի-

1. Ա. Գ. Պատմեցից մեզ, ասե [Ոլոմպիոդորոս],
զրոյցս անցիւս յաւանդութենէ ի մեզ հասեալ, զոր է
բազումք ի գեղջկաց զրուցեն մինչև ցայժմ: Մասեան
չեալ զՔսիսութրէսայ և զորոյնց մտաւ, որ այժմ
ոչ ուրեք երեւի, յորում, [խմանելով] ասեան, կարգ
չեալ բանից այսպիսի: Յեւ նաւելոյ Բսիսութրէսայ
ի Հայս...: Ոլոմպիոդորոսի պատմածը շատ պարզ կերպով
այս մատենանից է ծագում:

2) Եւսերի Կեսարացոյ ժամանակակից, մ. Ա.
եր. 31 հտն.: Նոյն տեղում եր. 36 ման. 4, քերած է
Յովսէպոսից Բերոսոսի նոյն հատումը:

3) Ինքնաւ եւ Ոլոմպիոդորոսի պատմած այդ զրոյցնե-
րի ծագումն օտար է, բայց շատ կասկածելի է, որ Եւսե-
րիոսն պատմողներ (Գրքի, Բանան, Դաւիթ), կամ ինքն

1 Պատմագիրն այս զրոյցները շնել է Գրգի և ի
Բանան անուն կոչեցեաց, եւս եւ երրորդ ոմն Դաւիթ:
Այս երեքից մէկը, «վարժեալ փիլիսոփայութեամբ» պատ-
մել է հայ ծերերին (որոնց քում էւ մեր պատմագիրն է
եղել) ք երբ ինքը Յունաց մէջ փիլիսոփայութիւն է ա-
վորելոյ եղել, մի օր Յունաց իմաստունների մէջ խօսք է
բացուել վասն աշխարհագրութեանց և բաժանմանց ազ-
գաց, եւ այդ ժամանակ Ոլոմպիոդորոս, որ կատարեալապէս
ինոսա (ի մէջ իմաստնոց յունաց), պատմել է Քսէնու-
քոսի մասին եւն:

շած գեղջուկներն անպատճառ հայ չպէտք է լինին:

Թէ նոյն իսկ Մորենացին Ոլումպիո-դորոսի պատմածը որ ծագում է մի մատեա-նից, և նորա յիշած գեղջուկներն օտար է համարում, այդ պարզ երևում է նորա խօս-քերից, որ վերջը յարում է. «Բայց առաւել յամախաղոյն հինքն արամազնեաց ի նուազս բամբառն և յերզու ցցոց եւ պարուց զայսոսիկ ասն յիշատակօք»: Կընշանակէ Մորենացին ասրերբում է «հինքն արամազնեաց» և Ոլում-պիոդորոսի մատեանն ու նորա «գեղջուկները», քանի որ երկսի մէջ բազմատուութիւն գնելով ասում է թէ «բայց աւելի յաճախ հինքն՝ ա-րամազնեաց պատմում են այդ բաները (զայ-սոսիկ) իրենց երգերի մէջ»:

Մորենացին այս երգերի բովանդակու-թիւնը չէ բերում. բայց զայսոսիկ գերանու-նից պէտք է ենթադրենք, որ երգերի մէջ յիշում էին Ոլումպիոդորոսի զրոյցների բովան-դակութեան նման բաներ՝ Նոյի, Սեմի, Տար-բանի մասին և թէ սոցա անունները ժողո-րդական ստուգարանութեամբ կապում էին Սիմ սարի, Տարօնի ու Յրօնքի և այս կամ այն տեղի հետ: Բայց կարող էին Մորենացու գրում հայ ժողովրդական զրոյցների և նոյն իսկ երգերի մէջ յիշատակուած լինել Նոյ, Սեմ և ինչ: Չգիտենք պատասխանն ինչու բա-ցասական պիտի լինի:

Վերելում մենք տեսնք, որ Հայոց գրա-ջի սեմական ազգերի աւանդութեամբ, ըստ Բերոսոսի և ըստ Արիգենայ, Բսիսութիւնսի (Նոյի) նաւը Հայաստան է ցամաք ելնում և թէ «ցայժմ» մինչև գրողի ժամանակը, մը-նում է, ասում են, նաւից նշխարներ ելն:

Եւրեմացին, իրենցից ըստ աւելացած չլինին Ոլումպիոդորի պատմի վրայ: Այդ յաւելումը մեկն անունով եմք Յրօնք անուն ասորականութեան մէջ:

1) «Հինքն արամազնեաց» դարձուածի համար, որ արապականացիների տեղի է տուել, կարելի է համեմատու-թեան բերել նոյն դեպքերում գործածական արդի «հին արաբ» կամ «հին հայ» մէջ: «Հին արաբիկ լա-րայի» (ֆայի) բաներ շատ գիտին կրպակներ: Ողոր-մածիկ Վերումենց Աղոււմբ հին արաբ էր, եւ շատ բաներ կասէ...» (Տ. Նաւասարդեան, Հայ ժող. հե-թարմութիւն, գիրք, եր. 31): Հմեմ. «բան» բառի գործա-նութեան այստեղ եւս իրեն պատմութիւն:

Այս աւանդութիւնը, եթէ նոյն իսկ հայերից լսուած չլինի և գրուած, կարող է հայոց գրա-ջիներից հայերին ևս անցած լինել: Բրիս-տոնէութեան ժամանակ նոյնը կարող էր աւե-լի զօրեղանալ: Եւ այս աւանդութիւնն ար-գէն իրօք դանում ենք հայոց մէջ Դ. դարում: Փաւստոս Բուզանդը (Գ. դար. Ժ. գլ.) գը-րում է թէ Միթրանցոց եպիսկոպոս Յակոբ գա-լիս է «ի լերինս Հայոց, ի լեռանն Սարարա-դայ ի սահմանս այրարատեան տէրութեանն ի գաւառն Կորդուաց... տեսանել զփրկական տապանն Նոյեան շինուածոյն, զի յայս լերին հանգեաւ նա ի ջրհեղեղէնս: Եւ նա ձեռք է բերում տապանից մի կտոր: Այս զրոյցն այժմ պատմում է Մասիսի վրայ, իսկ Սրուանձ-տեանի՝ մէջ Սիփան սարի համար գտնում ենք. «Բնակիչները մէկ զան կերզեն այս լե-ռան վրայ իրրեւ հին երգ, և կրօնն, Նոյայ տապանն եկաւ ի Սիփան, ասաց»:

«Սիփան, առ զիս, առ զիս»:

Սիփանն ասաց.

Գնա ի Մասիս, գնա ի Մասիս:

Որ մեծ է քան զիս, որ բարձր է քան զիս»²

«Տապանն Կորդուաց լեռներէն գալով առ Սիփան Գորդուաց գլխով անցեր, և քսուելով կամ զրգուելով՝ այս լեռան սուրբութիւնը տաշեր անցեր է եղեր»։ Հին Նախիջևանում մի մատուռ կայ այժմ, մեծ ուխտատեղի, Նոյայ տապան անունով որ համարում է Նոյի գե-րեզմանը³:

Ահա Նոյի համար մի զրոյց ու երգ, որ խորին հնութիւնից է գալիս և այս կամ այն ձե-ւով պահուած է այս կամ այն տեղի հետ կա-պուած: Ո՞վ կարող է ասել թէ այս հին երգն ու զրոյցը, որ Դ. դարից ցայժմ կայ հայոց մէջ, չէ-հղիլ և Մորենացու ժամանակի Աստուածա-շնչի պատմութիւնները շատ վաղ ժամանա-կում կարող էր հայ ժողովուրդն առնել և իւ-րացնել, կապելով իւր երկրի այս կամ այն

1) Գրոց Բրոց, եր. 56.

2) Նոյնը լսել եմ եւ Հին Նախիջևանի Աստուած գիւղում, միայն Սիփանի տեղ փոքր Մասիսն է յիշում Սիս անունով:

3) Լսելով այս մատուռի տեղանի տակ մեծ սեպա-գիւր արձանագործութեամբ փառ պիտի լինի, որ այժմ ծած-կուած է ծեփով:

տեղի հետ և նոյն իսկ բանաստեղծութեան
երգի նիւթ շինել Այս մի անսովոր երևոյթ
է քրիստոնեայ ազգերի հին պատմութեան
մէջ, Նոյնը տեսնում ենք և մեր արդի ժողո-
վրդական երգերի մէջ: ¹ Բայց հարկաւ այս
կամ այն տեղի հետ կապուած այդ զրոյցնե-
րը ու երգերը ոչինչ չեն ապացուցանում,
բայց եթէ Սուրբ Դրբի և յատկապէս հին կը-
տակարանի ազգեցութիւնը հայոց վրայ: Եթէ
մեր մատենագիրները և հին գրականութիւնը
թերթեւում լինին, գուցէ շատ այդպիսի օրի-
նակներ կը գտնենք, ինչպես վերեւում գրած
Նոյի տապանի զրոյցն է: ² Բայց այդ կը թող-
նենք, ներքեւում մենք կանգ առնենք մի այդ-
պիսի հին զրոյցի վրայ, որ և Խորենացու
հետ է կապուած: Այստեղ մի երկու խօսք այդ
հին երգերի տեսակի մասին:

Խորենացու խօսքերից կարելի է եզրակաց-
նել, թէ նորա ժամանակ Նոյի Սեմի և Էն- մասին
ընդարձակ ժողովրդական վիպական երգեր են
կոչել հայոց մէջ: «Պարուց երգերի» համար հա-
ւաստեալ կարելի է ասել, որ կարծ քնարական
երգեր են եղել, նման մեր արդի երկատողե-
րին և քառատողերին որոնք և բոլոր ազգե-
րի ժողովրդական պարերգերի ամենահին տե-
սակն են: Իսկ «ցցոց երգերը» Խորենացու
սարքածը կը համարէին, եթէ չլինէր Ագաթան-
գեղոսի մէջ (եր. 112) «ցուց» բառը, որ սո-
վորաբար բերում են այդ բառի նշանակութեան
համար: «Երգս առեալ բարբառեցան կայթիւք
վազելով՝ ցուց բարձեալ մարդկանն, կէսքն ի
բերդամիջին, և կէսքն զքաղաքամէջն լցին
խնձոյիք առ հասարակ: համարէին հարսա-
նեացն զպարսն պարիւղ և զկաքաւսն յորդորել»:

1) Այդպիսի երգեր կանելի է տեսնել Գարեգին և
Յովսէփեանի «Փրանկներ» մէջ, եր. 21:

2) Կարգան աշխարհագիրը Քրիստոսիմ երկրագոյ
մոգէրից մէկի գերեզմանը դնում է Մովսէսի գաւա-
ռում: «Մովսէս գաւառն է իշխանանիս, ուր կան
բազում վանքայք, նախ Ամենավրդիկն գերեզման քա-
ջառնին Մոզոյ Գապարայ» (Աշխարհացոյց Կար-
գանայ, Կ. Պոլիս. Կ. Կոստանեան, նոր ժողովածու, Ա.
պրակ. եր. 26) նոյն աւանդութիւնը պատմում է այժմ:
(Փրանկներ, Գ. Ս. Յովսէփեանի, եր. 34): Հմե. Սրուան-
մարեան Դոց Բոց, եր. 74 հմե. Ս. Գրի աւանդութիւն-
ներ այս կամ այն տեղի նկատուած «Կայկնի ծառեր»,
«Կանխայ քերդ» եղև:

Վրան կաւեայցինք և երկու օրինակ, Վա-
քաս կայթիւք և ցոյցս վաղից խաղաղացն
զիւաց զարշեկաց խաբողոց ծուլութեամբս
իմով շնորհեցին: ¹ «Հարսանիք էին, և ցոյցը
և զամբարք առագաստաց: ² Այսպիսի
գործածութեան մէջ ցուցք կամ ցոյցք
բառն ստանում է պարի մի տեսակի, կամ
հարսանեաց պարի իմաստ, որով և երգը
ցոյց պարերգերի մի տեսակն է, միայն հաւաս-
տեալ նոյնպէս քնարական կարծ տներ: Այդ-
պիսի երգերի մէջ ևս կարող էին Ս. Դրբի այս
կամ այն աւանդութեան և հայոց այս կամ
այն տեղական անուան մասին յիշատակու-
թիւններ եղած լինել, ինչպէս նոյնը գտնում
ենք մեր արդի պարերգերի մէջ: ³

Սանասարի առասպելը, Այս հին առաս-
պելն ևս հաւանօրէն Ս. Դրբի ազգեցութեան
տակ է կազմուած հայոց մէջ:

Թումա Արծրունին (եր. 121) Սասուն-
ցոց կամ Խուլթայ լեռնականների համար զը-
րում է. «Եւ զիտեն զսաղմոսն զինն թարգ-
մանեալն վարդապետացն հայոց, զոր հաւա-
պաղ ի բերսն ունին: Սաքա են դաւաճք Ասո-
րոց, որ չուեցին զինն Ագրամեղայ և Սանա-
սարայ որդւոյ Սենեբերիմ արքայի թագաւո-
րի Ասորեստանի և Եփեսոսի, յորոց անուն
ինքեանք Սանասնայք զինքեանս անուանեն»:
Արծրունու այս վկայութիւնից իմանում ենք,
որ Խուլթայ լեռնից հնուց լաւ ծանօթ են
կոչել Ս. Դրբին, քանի որ սաղմոսները հին թարգ-
մանութեամբ հանապաղ ի բերսն ունին: Այն-
պիսի կիսավայրերի ժողովուրդն, ինչպէս են
Սասունցիք ըստ Արծրունու, սաղմոսներից ա-
ւելի շուտ կարող էին իւրացնել Աստուածա-
շնչի վիպական պարզ պատմուածքները և ժո-
ղովրդական ստուգարանութեամբ օրէն կապ
դնել իրենց Սիմ սարի և Սեմ անուան իրենց
Սանասունքի և Ս. Դրբի Սարասարի միջև:
Եւ Արծրունու վկայութիւնից արդէն զի-

1) Ս. Գրիգոր Նարեկացու Մաշեկագրութիւնի, Ող-
բերգութիւն, բան 21, եր. 49:

2) Առաջ Ողբոցիւմնու, 4-րդ տող, եր. 172:
(Տպագրուած Վեներիկ, 1854, Սիմիւր Դուշի առաջինի
նկա):

3) Սրուանմարեան, Համով Հոսով, եր. 291, 305,
320, 338: Նաւասարդեան, Հայ ժողովրդ, Հեփարներ 2,
գիրք, եր. 90 հա:

տենք՝ որ խաթանքից ասորական ծագումն ունի համարել իրենց և յառաջագոյն Սանասարից թէ այդ կողմերի բնակիչներն սկզբնապէս ասորի են եղել և յետոյ հայացած, այդ յայտնի է: Աստուածաշնչից յայտնի է և այն, որ Սեբեքիւթ թագաւորի որդիքը՝ Աղրամելք և Սարասար իրենց հօրը սպանելուց յետոյ փախչում են յերկիրն Արարատոյ (Զոր. Թագ. ԺԹ. 37): Բայց թէ արդեօք պատմական յիշատակն է Սանասունքի բնակիչների Սանասարից, որ է Սորասարից՝ ծագելը թէ յետոյ Ս. Գրքի ազգեցութեամբ ստեղծուած մի բան, որ աւելի հաւանական է, այդ զժուար է ասել: Եւստինայն դէպքս թողմայի ժամանակ այդ աւանդութիւնը եղել է ժողովրդի մէջ: Նոյն աւանդութիւնը եղել է և Սորենացու ժամանակ, քանի որ սա ևս (Ա. իգ.) Աղրամելք և Սանասարի ըստ Աստուածաշնչի հայտնի փախչելը պատմելուց յետոյ յարում է: Եւրոպ զմինն յարեմտից հարաւոյ աշխարհի մերոյ, մերձ ի սահմանս նորին Ասորեստանի, բնակեցուցանէ Սկայորդին մեր քաջ նախնին՝ այսինքն զՍանասարին, և ի սմանէ ներքալ լցին զՍիմս ասացեալ լեռան:»

Պ. Գարագաշեանը (Ա. եր. 1-9), որ առիթ չէ փախցնում Սորենացու հակասութիւնները բռնելու համար, Արծրունեաց ծագումը Սանասարից ճշմարիտ համարելով, Սորենացու հայրենասիրութեամբ է բացատրում Սանունցոց ծագումը Սանասարից, բայց առանց հիմունքի: Նա ասում է, իբրեւ թէ Սորենացին Սանասարին Սիմ լեռան կողմերն է բնակեցնում «Սիմ և Սանասար ձայնի նմանութեան նայելով» և թէ մինչ Սորենացին «հոս Սիմ անունն ի Սանասարոյ կրթուի հանել» այլուր (Ա. գ.) ի Սեմայ կը համարի կոչեցեալ այնպէս: Բայց այդ հակասութիւնը երևակայական է: Սորենացին բնաւ չէ ասում թէ Սիմ լեռան անունը Սանասարից է առաջ եկել այլ միայն Սեմից: Միւս կողմից տեսանք Սանունցի ժողովուրդն ինքը իւր երկրի Սանասուն (և ոչ Սիմսարի կոչումը) հանել է Սանասարից: Ոչ մի հիմք չունինք ասելու թէ Սորենացին է սարքել այս առասպելը և նա այնքան ազդեցութիւն է ունեցել, որ ոչ միայն Արծրունիք իւրացրել են նո-

յա սարքածը, այլ և Սանու կիսավայրերի լեռնախաները: Բանի դեռ այս չէ ապացուցուած, պիտի ընդունել անհրաժեշտօրէն, որ Սորենացին, իսկապէս Մար Արաս, որից առնում է Սորենացին (Ա. իգ.), ժողովրդից է առել այդ աւանդութիւնը, թէ Արծրունիք և Սիմ լեռան բնակիչները, որ են Սանասունք, Սանասարից են ծագում — մի աւանդութիւն, որ ցարդ ևս կենդանի մնում է մեր Սանու Ծռերի մէջ: Մեր ժողովրդական մեծ վէպն սկսում է երկու եղբայրների Սանասարի և Արամելքի կամ Բաղդասարի փախչելով հայաստան, ուր և շինում են Սանու բերդը: Այսպիսով մեր արդի վէպի առաջին ծիւղի սկզբնաւորութեան հնութիւնը մինչև Սորենացին և Մար Արաս է հասնում:

Թէ Արծրունեաց նախահօր, Սանասարի կամ իւր եղբոր մասին Սորենացու ժամանակ առասպել եղել է, այդ շատ պարզ ասում է նա Բ. գրքի Է. գլխի մէջ: Այստեղ մի առ մի պատմում է զանազան ցեղերի և նոցա անունների ծագումը և իրեն նախարարական տներ հաստատուելը Վաղարշակից: Արծրունի բառն արծիւ ունի, ձեռք բացատրելուց յետոյ կցում է, «թողում զառասպելեացն բաջաղանս» որ ի հաղամակերտին պատմին. մանկան նիրհելոյ անձրեւ և արեւ հակառակեալ, և հովանի թռչնոյ պատանայն թալկացելոյ: Այս թռչունն ըստ ինքեան արծիւ է հասկացում: Պատմագրի խօսքերից պարզ իմացում է, որ Արծրունի բառն ըստ առասպելին հանել են այն արծուից, որ հովանի է արել նոյն ցեղի նախահօրը, ըստ Սորենացու, Սանասարին: Բայց այս աւանդութիւնը նա արհամարհում է, «թողում զառասպելեացն բաջաղանս» որովհետեւ իրեն աւելի հաւանական է թուում «արծիւ ունի, որք արծուիս առաջի նորա կրէին» բացատրութիւնը: Դժբախտաբար Սորենացին իւր արհամարհանքի պատճառով առասպելից շատ քիչ բան և շատ սեղմ ոճով է բերում: Միւս կողմից մեր արդի վէպի շատ վարիանտներ ևս չունինք, որ կարողանայինք համեմատել թէ արդեօք այս աւանդութիւնը մնացել է ցարդ լի է, և Պատմութեան մոտիւր, արծուի հովանի անելը, շատ տարածուած ժողովրդական է, Մեր մի նշանաւոր հեքիաթի մէջ ևս արծի-

ւը հերոսի վրայ լծեցրը փռում աւ շուաք տնում: որ դինջ քնի»¹ Եթէ այս հեքաթը յիշում ենք, անոր համար է միայն, որ բովանդակութեամբ շատ նման է մեր ժողովրդական վէպի մի պատմութեանքին՝ Սանասարի կամ իւր եղբոր Բաղդասարի վէպի Պղնձէ քաղաքի ճիւղին:

«Գուտանականն» — Խորենացին երեք անգամ յիշում է (Ա. ժգ. ժգ.), որ Արամի պատմութիւնն առնում է Մար Արասից՝ բայց վերջն աւելացնում է. «Թէ ընդէր այսոքիկ ի բուն մատեանս թագաւորացն կամ մեհնիցն ոչ յիշատակեցան» մի ոք ընդ այս երկրայացեալ տարակուսեսցի: ... Բայց թէ պէտեւ ոչ ի բուն մատեանն» սակայն, որպէս Մար Արաս Կատինայ պատմէ, ի փորոնց ոմանց եւ յաննշանից արանց ի գուտանականէն այս գտանի ժողովեալ ի ղիւանի արքունեաց: Ահա մի մութ կտոր, որ պատճառ է եղել մեծ յարձակման Խորենացու վրայ, բայց դժբախտաբար սխալ հասկանալով բնագիրը: Մենք կրփորձենք դռնէ սխալն ողղել:

Պ. Գարագաշեանը (Քնն. պատ. Ա. եր. 153), նորան հետեւելով և պ. Խալաթեանը² վերելի հատուածի վերջին մասն այսպէս է հասկանում. «փոքր և աննշան արանց ոմանց ձեռքը երգեր է ժողովուած և պահուած էին յարքունի ղիւանին Նինուէի» Սակայն այդ սխալ է: Փոքր և աննշան մարդիկը ոչ թէ ժողովողներն են, որոնք կարող են և շատ նշանաւոր եղած լինել, այլ փոքր և աննշան մարդկանցից, նոցա բերանից, որ է գուտանականից են ժողովուած այդ պատմութիւնները: Հմմտ. Ա ժթ. «ի բանից արանց իմաստնոց... յորոց մեք ... ջանացաք հաւաքել զհազարութիւնս»:

Այսպէս սխալ հասկանալուց յետոյ պ. Գարագաշեանը զարմանալի է գտնում թէ ինչպէս «փոքր և աննշան մարդոց ձեռամբ հանուած հաւաքածոյ մը մուծաւ ի ղիւան արքունի» և որ ղլխաւորն է, եթէ Ասորեստան-

ցիք, ըստ Խորենացու, պէտք չունէին «զազգաց օտարաց և զաշխարհաց ի բացեալ և ըզհամբաւս հինս և զգրոյցս նախնականս յիւրեանց թագաւորաց կամ մեհնից մատեանս գրել» էլ ինչպէս ասում է նա, «նոյն գրոյցներն ի ձեռաց փոքր և աննշան մարդոց առնելով գրին յարքունի ղիւանին իւրեանց, ոչ ապաքէն հաղատութիւն է: Սա ևս չենք հասկնար, թէ թագաւորաց մատեաններուն և արքունի ղիւանին մէջ ինչ տարբերութիւն կայ: Մախ քան հակասութիւն որոնելը, կարծում ենք, պէտք էր ջանալ հասկանալ:

Հակասութիւն անել ամեն մարդ կարող է, և մենք չենք ասում թէ մեր ծերունի պատմահայրը հակասութիւններ չէ անում: Բայց այնպիսի ձեռով հակասութիւն, որ այստեղ վերահրում են Խորենացուն, կարծում ենք ոչ մի մարդ չի անել: Ինչպէս մի թէ կարող է, որ և մարդ գրել թէ հայոց այսինչ պատմութիւնը չկայ այսինչ օտարազգի աղբիւրի մէջ, և մինչև իսկ պատճառաբանել թէ ինչու չկայ և ապա անմիջապէս կցել թէ նոյն պատմութիւնը նոյն աղբիւրի մէջ կայ գուտանականից, այսինքն գուտաններ ի բերանից ժողովուած: Եւ այսքանը բաւական չէ, անմիջապէս աւելացնել մի երրորդ պատճառաբանութիւն էլ թէ ինչու նոյն պատմութիւնը չկայ նոյն աղբիւրի մէջ: Այսպիսի հակասութիւն ոչ մի մարդ չի անել: Ծատ հասկանալի է ուրեմն, որ բուն մատեանք թագաւորացն կամ մեհնիցն և ղիւան արքունեաց՝ բառերի տակ նոյն իմաստը կարելի չէ հասկանալ:

Թէ «բուն մատեանք թագաւորացն և մեհնիցն» ասելով մեր պատմագիրն այստեղ հասկանում է Նինուէի մատեանները՝ շատ պարզ երևում է նորա գրութեան եղանակից: Այդ մատեաններից մէկն է եղել և այն մատեանը, «որ ունէր զընուն հեռոց և ղնախնեացն ըանս» (պատմութիւնները), որից և Մար Արաս քաղում է (հանեալ) հայոց պատմութիւնը: Նինուէի այս մատեանները կոչում է երեք անգամ «ղիւան արքունի» (Ա. Ը. Թ.):¹ Այս արքունի ղիւանում ուրեմն այս բուն² մատեաններում չկար յիշած պատմութիւնը

1) Տ. Նաւասարդեան, Հայ ժող. հնգ. Բ. 17. ուր առասպելական Չմուխս հասն է դուռն զայիս, իսկ նոյն հնգարի վարիանքի մէջ, Մուսաննան Մանանայ, եր. 181. արծիւ է:

2) Халат. Арм. Эпосъ. եր. 134. նոյն մէտով և հ. Սեփեանի բարգմանութեան մէջ:

1) Հմմտ. Ա. իս. «ի հնոց դիւանացն քաղեացոց» սպորեւսանեաց և պարսից... ի քարտէս արեւմիս:

2) «Բուն» անականը, որքան հասկանում ենք,

և չէր էլ կարող լինել, ասում է Խորենացին, բայց, աւելացնում է նա, գուսանականից զբրուած կայ ՚ի գիւանի արքունեաց»:

Ո՛րն է ուրեմն «արքունեաց գիւանը» եթէ Նինուէի «արքունի գիւանը» չէ, Կարծում ենք Մծրինի արքունեաց գիւանը: Այս գիւանը յիշում է Խորենացին ուրիշ տեղեր: «Որ ինչ ի քարտէսս գիւանին Նդհսիայ՝ որ է Ոււհայ, որ յաղագս թագաւորացն մերոց պատմէր, որ մատենանքն ի Մծրնայ էին փոխնալ անոր» (Բ. Ժ.): Իսկ այս փոխադրութիւն Արգարի ձեռով է լինում: «Փոխէ ի նա (Սդգեսիա) զարքունիս իւր՝ որ ի Մծրն...» և զմատենաս մեհնիցն վարժարանին, և միանգամայն զլիւանս թագաւորացն» (Բ. իւ.): Մծրինի գիւանի սկիզբը զրուած է ըստ Խորենացու: Վաղարշակի ձեռով, երբ Մար Արաս Նինուէի գիւանի մի մատենանից քաղում բերում է հայոց պատմութիւնը, նա «առաջն իւրոց զանձուն համարելով զնէր յարքունիսն» (Ա. Թ.): Կրնշանակէ հայոց արքունիքում, որ Մծրինում է, պահւում էին ըստ Խորենացու, հայոց պատմութեան վերաբերեալ մատենաներ: Կեղծիք է թէ իրողութիւն, այդ մասին չէ խնդիրը: Նոյն արքունեաց կամ թագաւորաց գիւանում կարող էին գուսանների բերանից զրուած պատմութիւններ էլ պահուել: Եթէ ասորեստանցոց համար «պարծանք ու բարգաւաճանք» չէին օտար հայ ազգի «հին համբաւներն» ու «նախնական զրոյցները», հին հայոց քաջութեան գործերը զրի աւելել և զնել իրենց թագաւորաց մատենաների մէջ, անշուշտ իրենց հայոց համար պարծանք պիտի լինէր այդ, չէ՞ որ Վաղարշակը հայոց պատմութիւնն ունենալ է ուզում անոր համար, որ իմանայ «քաջաց արգելք եթէ զպատաց անցեալ ունիցի զտեղիս: Այսպիսով վերանում է այդ հակասութիւնը»:

Բայց մնում է Խորենացու մի «զարմանալի խոստովանութիւնը» որի վրայ աւելի մեծ ուշադրութիւն պիտի դարձնել քան եղած է: Դա Մար Արասի աղբիւրների խնդիրն է:

Խորենացու խօսքերից մենք իմանում

ենք, որ Մար Արասի գիրքը երեք աղբիւրից է կազմուած եղել: Նինուէի արքունի գիւանի մի մատենան, որից Մար Արաս քաղում է միայն մեր ազգի հաւատարմ պատմութիւնը, իւր ժամանակի անցքերն էլ նա աւելացնում է այս պատմութեան վրայ, այսինքն Վաղարշակի և Արշակի՝ պատմութիւնները: Այս Մար Արաս օգտուել է և «գուսանականից»: Մեզ համար հետաքրքիրն է այս վերջինը: Նախ թէ նա ո՞ր չափով է օգտուել գուսանականից:

Խորենացին Արամի պատմութեան վերջում ասում է թէ «այսորիկ» չեն յիշատակուել ասորեստանցոց մատենաներում, և ապա թէ «այս, ինչպէս Մար Արասը պատմում է, գուսանականից ժողովուած կայ (Մրծրինի) արքունեաց գիւանում»: Ուրեմն Մար Արասը պարզաբար ասած է եղել թէ գուսանականից է ծագում այդ պատմութիւնը իւր մատենանի մէջ: Բայց ի՞նչ պիտի հասկանալ «այսորիկ» և «այս» գերանունների տակ, միայն Արամի՞ պատմութիւնը, ինչպէս բնականօրէն պիտի հասկացուէր, թէ «ի Հայկայ մինչև ցարամ պատմեալքն», ինչպէս հասկանում է պ. Գարադաշեանը: Սա պատճառարանած չէ ինչու է այդպէս հասկանում, բայց մենք ուղիղ ենք համարում այդպէս հասկանալը: Ծիշտ նոյն տեղում Մար Արասից բերում է Խորենացին մի պատճառարանութիւն թէ այդ պատմութիւնները չկան «բուն մատենաներում», որովհետեւ Նինուէ հրամայել է (1) այրել քաղում մատենան և զզրոյցս առաջնոց... (2) իսկ որ առ իւրովք ժամանակօք դադարեցուցանել, և որ ինչ վասն իւր միայնոյ զրել: Եթէ Մար Արասի այս պատճառարանութիւնը միայն Արամի գործերի համար լինէր, այն ժամանակ պէտք չէ յիշուած լինէր պատճառարանութեան առաջին մասը, բաւական կը լինէր միայն երկրորդը: Թէ «այսորիկ» գերանունան տակ, լոկ Արամի պատմութիւնը միայն չէ հասկացւում, այդ երևում է աւելի Խորենացու

1) Խորենացին Արշակի պատմութեան վերջում գրում է. «Աստուծո՛ւ սպառնիս բաճի՛ ճերմունցն Մար Արաս կոսիմայ» (Բ. ք.): որով ուզում է հասկացնել, որ այդ պատմութիւնների համար օգտուել է մանաւորանից:

Բայց է առիթ մատենաների պատմութեան հարազատութիւնը իրեն ժամանակակիցներից գրում:

իրեն պատճառաբանութիւնից թէ Միւս յառաջ քան զՆինոսի ժամանակս թագաւորութեանն է, յորում ոչ ոք այսպիսի իրաց փոյթ յանձին ունէր: Արդ Արամը Նինոսի ժամանակից, «սակաւութեամբ» նորանից առաջ սկսում է կատարել իւր քաջութիւնները և «սակաւութեամբ» նորանից առաջ միանում (Ա. Ժ. Ժ. Ժ.): Ուրեմն այս առաջին պատճառաբանութիւնն իսկապէս Արամի ժամանակին չէ, վերաբերում է այլ նորանից առաջ: Այսպէս Մար Արասի և աւելի թորենացու պատճառաբանութիւններից երեւում է, որ «այսօրիկ» գերանուան տակ պէտք է հասկանալ Հայկից մինչև Արամ պատմական քննարկ: Այնչա՛հ նախ Մար Արաս իւր զրքի մէջ յիշած է եղել, որ Նինոսից առաջ և Նինոսի ժամանակ եղած հայոց պատմութիւնը քաղուած է գուսանականից: թորենացին այդ ասում է առանց կամենալու, որովհետև առանց մտածելու արտագրում է իւր աղբիւրը և նորա պատճառաբանութիւնը: Նա մոռանում է, որ այսպիսով մեծ հակասութեան մէջ է ընկնում, և վերջը նոյն իսկ զգում է, որ այդ չպէտք է անել և աւելացնում է. «Այլ զայս աւելորդ եղև մեզ երկրորդել»:

Այստեղից առաջ է գալիս այն խնդիրը թէ վաղարշակի նամակը և Նինուէի այն հաշակաւոր մատենան, որ կեղծիք են, իրեն թորենացու կեղծածն են թէ իւր աղբիւրի՝ Մար Արասի որից և թորենացու մէջ են մտնել: Բայց այդ մենք կրթողները, որովհետև հարկ կրկնէր շատ հեռուն երթալ և ձեռք առնել մի բազմակնճիւղ խնդրի՝ Մար Արասի և Անանուի խնդիրը: Մեզ համար բաւական է, որ այստեղ թորենացու կողմնակի եթէ կարելի է այսպէս ասել, զրքից փախցրած խօսքից իմանում ենք, որ Մար Արաս իւր զրքի մէջ յայտնած է եղել, որ այդ հին պատմութիւնները գուսանականից են ժողովուած: Հայկի առասպելի մէջ մենք տեսանք, որ մեր պատմագիրը միայն զրուոր աղբիւրից՝ Մար

Արասից է առնում այն առանց իւր կողմից ակնարկութիւն անդամ անելու թէ ժողովրդական ծագում ունի: Միւս կողմից մենք այնտեղ մեր հետազոտութեամբ այն եզրակացութեան եկանք, որ առասպելը ամենայն հաւանականութեամբ ժողովրդական հիմունք ունի: Մար Արաս օգտուած է ժողովրդական զրոյշից: Այժմ այս կողմնակի մտքը ակնարկութիւնը որի վրայ սկզբում ուշադրութիւն չե՛ք զարժեցել, գալիս է հաւաստիացնելու այդ եզրակացութիւնը:

Արդեօք Արամի պատմութիւնն ևս ունի ժողովրդական ծագում: Թէ ամբողջապէս չի՛նձուէ և գուսանների վերագրուած: Պ. թագաւորական հետեւութիւնները դեռ համոզելի չեն: Թէ թորենացուց և իւր աղբիւրի՝ Մար Արասից աւելցրած բաներ կան այդ պատմութեան մէջ՝ մերժել կարելի չէ: Բայց թէ պատմութիւնն ամբողջապէս չի՛նձուէ, այդ ասել չենք կարող: Սակայն մենք այդ մտքի խնդրի մասին կանգ առնել չենք ուզում, որովհետև առանձին ուսումնասիրութեան կարօտ է այդ և ինչպէս կարծում ենք, կապ ունի Մար Արասի և Անանուի խնդրի հետ: Ժողովրդական ծագում ունի Արամի պատմութիւնը, թէ ամբողջապէս չի՛նձուած է Մար Արասի ձեռով այդ չէ խանդարում, միւս հայ ժողովրդական առասպելներին թորենացու հայոց պատմութեան մէջ: Ուստի անցնենք մեր ընդհանուր եզրակացութեան: Բայց նախ քան այս մի կէտը խօսք ևս տալաւ պատմութեան մասին:

Երգերի չափը: Կարող ենք արդե՛ք այս մասին այժմ հաստատ մի բան ասել, ինչպէս անում են ուրիշները, մէկն աշխատելով ցոյց տալ թէ ինչ պարզ կամ խորամանկ չափով են երգել մեր հին վիպասանները, միւսն աշխատելով ցոյց տալ, որ այդ չափը գոյութիւն չունի: Կարծում ենք, ոչ: Մենք այս մասին էլ այստեղ կանգ առնել չենք ուզում: Միայն այսօրիկ պէտք է ասել, որ ապարդիւն աշխատանք է մի քանի տողից մի հին չափի մասին եզրակացութիւն հանել, առանց առաջուց հաստատ ապացուցանելու թէ երբ թորենացին մի երգի բովանդակութիւն է բերում, թէկուզ նոյն իսկ երգի բառերով երբ ընտրել ձեռով բառացի է բերում, և

1) «Գուսանական» բառի գործածութիւնն էլ քեռնս ցոյց տալիս, որ եւրեանցիկ ուրիշից անուանալի, որովհետև հայոց ժողովրդական գրոյցներն ու երգերն մա ոչ մի տեղ գուսանական չէ անուանում, այլ առասպել ու վիպասան:

կրր փոփոխութիւն է մայնում մէջրս Բայի այդ ասեմք յօրենացիս անփոփոխ բերում է մի քանի հատուածներս միթէ կարելի է այդ հատուածների չափի մասին խօսելու առանց ձեռագիրներէ համեմատութեամբ բնական վերականգնելու թէ վաճաղի մասին հատուածը ժողովրդական երգ է և մի որոշ չափով է գրուած և նոյն իսկ ժողովրդի սիրած կրկնութիւններով և հանգիստութիւններով, շերտեր և երկին և երկիր, երկնէր և ծիրանի ծով, զգարամիկ կեցեցիկ, «հուր հեր», ակունք արեգակունք», այդ շատ պարզ երևում է ամեն կարգացողի որ ներգաշտութիւնից բան է հասկանում, Բայց միթէ կարելի է ասել օրինակ՝ թէ այդ երգի առաջին չորս տողը միայն ժողովրդական պիտի համարել, որովհետեւ անոնց մէջ կայ «կանաւոր ուրիշման և 7-վանկանի չափ», իսկ միւս տողերը ոչ որովհետեւ խառն են 6, 7, 8, 10, 12 վանկերից: Եւ ո՞վ է ասած, որ մեր հին վիպասանները կանոնաւոր հաւասարութիւ վանկերով տողեր են կազմել, և ոչ թէ խառն երկար ու կարճ տողեր, նայելով իմաստին, ինչպէս նոյնն անում են այժմ մեր արդի վիպասանները կամ տաղերները, ինչպէս իրենք իրենց կոչում են Սասնու ծաւր» պատմողներն ու երգողները: Եւ վերջապէս ո՞վ ասաց, որ վաճաղի երգի առաջին տողերն, օրինակ, 7-վանկանի պիտի կարգանք, ինչպէս գնում է պ. Սալաթեանը, և ոչ թէ 8-վանկանի քանի որ շատ ձեռագիրների մէջ այսպէս է:

«Երկնէր երկին, երկնէր երկիր»

Նրկնէր և ծովն ծիրանի:

Շատ պարզ է ուրեմն որ չափի մասին խօսելուց, այս կամ այն եզրակացութեան գալուց առաջ զոնէ պէտք է նախ բնագիրը վերականգնել: Առանց այդ բնագիրը ձեռի առկ ունենալու ամեն մի ենթադրութիւն և սրամտութիւն ընդունայն վաստակ կրմնայ: Եւ երբ մենք յօրենացու բնագիրը կունենանք ձեռի առկ, այնուհետեւ միայն կարելի է ուսումնասիրել չափը՝ ի նկատի ունենալով մեր շարականների ու հին տաղերի և մեր արդի ժողովրդական

երգերի չափը: Աւելորդ չի լինի՝ նկատել, որ ինչպէս ուրիշ տեղ տարիներ առաջ յայտնել ենք, մեծ ազդակցութիւն ենք տեսնում մեր արդի ժողովրդական երգերի և «Սասնու ծաւրի» չափի և մեր հին վիպասանաց երգերի չափի մէջ, որքան կարելի է գաղափար կազմել յօրենացու ազդակի օրինակից: Դա ազատ ուրիշման չափ է, որ և մեր հին շարականների յատուկ է, և որ միայն հայոց բանաստեղծութեան սեպհական չափը չէ: Մենք այս մասին կանոն կառնենք առանձնապէս մի ուրիշ աշխատութեան մէջ:

Վերջակ: Հարկաւոր է ուղղել Արարատի, Մարտի համարի մէջ, էր. 176. Ծան. երկրորդ սիւնակի մէջ մտած հետեւեալ սխալը, Տղադրուած է. «Յիշած բլուրները, բազում մշտնը հեռու չեն վաղարշապատից, այլ շատ մոտիկ, Ս. Էջմիածնի անտառից ոչ աւելի քան 1/2 վերստ, Միայն այդ բլուրները ճիշտ անունը չեն կրում այժմ: Վաղարշապատից եւլն Պէտք է լինի. Յիշած բլուրները, բազում մշտնը հեռու չեն վաղարշապատից, Առաջիկ շատ մոտիկ, Ս. Էջմիածնի անտառից ոչ աւելի քան 1/2 վերստ, կան Քիւրափա բլուրները, Միայն այդ բլուրները ճիշտ անունը չեն կրում, Այժմ վաղարշապատից եւլն:

Մ. Արեղեան



ՄԱՆՐԱԼՈՒՐԸ

Ամենամին յաղիրն աշխարհում. — Մինչև վերջին ժամանակներս կարծում էին թէ աշխարհիս ամենահին լրագիրը Պեկինում հրատարակուող «Սին-Պաոյ» թերթն է, որի գոյութիւնը 1000 տարի են հաշուում: Լոնդոնում ֆրանսական դեսպանին շինացիք հին գրքեր են ցոյց տուել, որոնցից երեւում է թէ ամենահին թերթը ոչ թէ «Սին-Պաոյն» է, այլ «Ասինգ-Պաոյն», որի հրատարակութիւնը Քրիստոսից 700 տարի առաջ է սկսուած:



Հետաքրքրական հնագիտական գիտ: — 1900 թ. Մայիսի վերջին Էլեզուիդում, Դամենգորֆի մօտ, երկու բանուոր հողածուրի հանելիս տեսնում են քրդեայ հագուստի կտորներ, իրենց դորձը շարունակելով մի քիչ յետոյ նրանք գտնում այն դիակը, որ երբեմն կրել էր այդ հագուստը, Դիակը մերի էր, նրա զիրքը նման էր քնած մարդու գրութեան, պառկած էր ձախ կողքի վրայ, զլուխը դրած, ձգուած ձախ թևի վրայ, իսկ վրան ձգած էր թիկնոց, մի զոյգ կաշիէ ոտնամաններն ու կաշիէ գոտին փաթաթած վարտիկի մէջ գրուած էին ոտների մօտ: Այս գիւ-